Քաղաքացիական գործ թիվ ԵԴ/63151/02/22

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ
ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

07 դեկտեմբերի 2022 թվական **քաղաք Երևան**

Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը՝ նախագահությամբ դատավոր Հ. Ջալալյանի (այսուհետ նաև՝ Դատարան), քննության առնելով <<ԶԵԹ-ՊՐՈՖԻԼ>> ՍՊ ընկերության ընդդեմ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասով ՀՀ քաղաքաշինության կոմիտեի՝ 10.11.2022 թվականի որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը,

ՊԱՐԶԵՑ

01.12.2022 թվականին հայցվոր <<ԶԵԹ-ՊՐՈՖԻԼ>> ՍՊ ընկերության ներկայացուցիչ Հ. Ենգոյանի կողմից հայցադիմում է ներկայացվել Դատարան ընդդեմ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի՝ խնդրելով անվավեր ճանաչել ՀՀ քաղաքաշինության կոմիտեի՝ 10.11.2022 թվականի որոշումը՝ <<ԶԵԹ-ՊՐՈՖԻԼ>> ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասով:

Հայցադիմումը Դատարան է մուտքագրվել 2022 թվականի դեկտեմբերի 01-ին, դատավորի աշխատակազմին է հանձնվել 2022 թվականի դեկտեմբերի 05-ին:

Ուսումնասիրելով ներկայացված հայցադիմումը՝ Դատարանն արձանագրում է, որ այն ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 120-122-րդ հոդվածներով սահմանված պահանջներին համապատասխան:

Հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքեր չկան, հետևաբար, դատարանը գտնում է, որ հայցադիմումը պետք է ընդունել վարույթ:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-125-րդ, 199-200-րդ, 234.6-րդ հոդվածներով՝ Դատարանը

ՈՐՈՇԵՑ

<<ԶԵԹ-ՊՐՈՖԻԼ>> ՍՊ ընկերության հայցադիմումն ընդդեմ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասով ՀՀ քաղաքաշինության կոմիտեի՝ 10.11.2022 թվականի որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, ընդունել վարույթ:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Հ.ՋԱԼԱԼՅԱՆ**